

վկար այս փախտատականներուն հետ, որոնք նոյնութիւն մը կ'ենթադրեն :

Եւ դարձեալ. «Սակական ազանդը եղած է Հայաստանի մէջ յեաջրհեղեղեան ժամանակներէ ու Հայկական ու Սակական անուանց մէջ մեծ տարբերութիւն մը չկայ, երբ յիշենք Հուս տաւերու լծորդութիւնը :

«Հայկ ու Հայ անուններու տարրը շատ անգամ» Հա կը գրուի փոխանակ Հայի. Վրացիներն ալ մեզի Հաոս կ'անուանեն կամ կը գրեն :»

«Ընդունելի երեցած է Սակական կրօնքի հնութիւնը, Փոխադարձութիւնը ուրիշ նմանութիւնն ու հնութիւնը, Հայոց ու Փոխադարձաց ազգակցութիւնը (շատ հեղ յիշուած, որոնց նահապետները կը վկայուին թէ նոյն են Գոմեր ու Ասքանազ :»

Որովհետեւ Ալիշանը այստեղ զուտ կրօնական խնդիրներով կը զբաղուի, այլևս այս յիշատակութիւններէն անդին չանցնիր ու կը վերջացնէ աւելցնելով :

Թէ՛ մեր, թէ՛ այս ազգաց լեզուի, զգեստներու, հին կրօններու նմանութիւնները նիւթ են լեզուարանական, կրօնարանական, աշխարհագրական ու ազգարանական հետազոտութիւններու :

Արդ, յիշատակենք որ Սակ, Շակ, Հայ կամ արդի Շկակ ցեղը որի մասին ծանօթացուցինք՝ նոյնութիւն մ'է : Շկակ ցեղը այժմ կը գտնուի Վանի արեւելեան հիւսիսը՝ որ իր ծայրագոյն յափշտակիչ բնաւորութեան ու աւարառութեան յատկութիւններով տխուր հռչակ մը ունի :

Ուրիշ կտոր մը դարձեալ Ալիշանէն. «Իբր 600 տարի նախ քան զԲրիտտոս, Պարսք և Մարք և Նիզակակիցքն հալածեցին զՍկիւթացիս կամ զՍակս յԱրևմտեան Ասիոյ, և Սակեան բաւած տօները հաստատեցին, գլխաւոր պատիւ և պաշտօն ընծայեցին Անահայ՝ զոր նոյն իսկ Սակք պաշտէին, ըստ ոմանց և Անահիւան Սակեան կոչուէր : Անահայ պաշտօնատեղին էր Մարաց Եկրատանը : Մերը Երիզա-Եկեղեկաց գաւառին մէջ,»